

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասների և ամբողջական պայմանների համար դիմել՝
 «Ամերիաբանկ» ՓԲԸ
ameriabank.am | 010 56 11 11
 Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2,
 Էլ. հասցե՝ office@ameriabank.am
 Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից

Ժամկետային ավանդ

Ավանդի նվազագույն սկզբնական գումարն է՝ 10 000 ՌԴ ռուբլի:

ՌԴ ռուբլի							
Ավանդի տեսակներ	Տոկոսների վճարման եղանակ	Ավանդների ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի					
		31 –ից 90 օր	91 –ից 180 օր	181–ից 270 օր	271–ից 365 օր	366–ից 730օր	731–ից 1825օր
		Անվանական տարեկան տոկոսադրույք (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)					
Ամերիա Ավանդ ¹	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	2.30% (2.32%)	3.40% (3.45%)	4.40% (4.49%)	4.90% (5.01%)	4.90% (5.01%)	4.90% (5.01%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	3.50% (3.55%)	4.50% (4.58%)	5.00% (5.09%)	5.00% (5.09%)	5.00% (5.09%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	5.20% (5.20%)	5.20% (5.20%)
	Ժամկետի սկզբում	2.20% (2.23%)	3.30% (3.38%)	4.20% (4.36%)	4.70% (4.93%)	4.50% (4.83%)	3.90% (4.43%)

Ավանդ ընդհատման² հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	1.90% (1.92%)	3.00% (3.04%)	4.00% (4.07%)	4.50% (4.59%)	4.50% (4.59%)	4.50% (4.59%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	3.10% (3.14%)	4.10% (4.16%)	4.60% (4.68%)	4.60% (4.68%)	4.60% (4.68%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	4.80% (4.80%)	4.80% (4.80%)
Ավանդ Գումարի ավելացման³ հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	3.10% (3.14%)	4.10% (4.18%)	4.60% (4.70%)	4.40% (4.49%)	4.40% (4.49%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	3.20% (3.24%)	4.20% (4.27%)	4.70% (4.78%)	4.50% (4.58%)	4.50% (4.58%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	4.70% (4.70%)	4.70% (4.70%)
Ավանդ Գումարի նվազեցման⁴ հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	3.10% (3.14%)	4.10% (4.18%)	4.60% (4.70%)	4.60% (4.70%)	4.60% (4.70%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	3.20% (3.24%)	4.20% (4.27%)	4.70% (4.78%)	4.70% (4.78%)	4.70% (4.78%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	4.90% (4.90%)	4.90% (4.90%)
Ավանդ Գումարի ավելացման³ և ավանդի ընդհատման² հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	2.70% (2.73%)	3.70% (3.76%)	4.20% (4.28%)	4.00% (4.07%)	4.00% (4.07%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	2.80% (2.83%)	3.80% (3.85%)	4.30% (4.37%)	4.10% (4.16%)	4.10% (4.16%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	4.30% (4.30%)	4.30% (4.30%)

Ավանդ Գումարի նվազեցման ⁴ և ավանդի ընդհատման ² հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	2.70% (2.73%)	3.70% (3.76%)	4.20% (4.28%)	4.20% (4.28%)	4.20% (4.28%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	2.80% (2.83%)	3.80% (3.85%)	4.30% (4.37%)	4.30% (4.37%)	4.30% (4.37%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	4.50% (4.50%)	4.50% (4.50%)
Ավանդ Գումարի ավելացման ³ և գումարի նվազեցման ⁴ հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	2.80% (2.84%)	3.80% (3.87%)	4.30% (4.39%)	4.10% (4.18%)	4.10% (4.18%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	2.90% (2.93%)	3.90% (3.96%)	4.40% (4.47%)	4.20% (4.27%)	4.20% (4.27%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	4.40% (4.40%)	4.40% (4.40%)
Ավանդ գումարի ավելացման ³ , նվազեցման ⁴ և ավանդի ընդհատման ² հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	2.40% (2.43%)	3.40% (3.45%)	3.90% (3.97%)	3.70% (3.76%)	3.70% (3.76%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	2.50% (2.52%)	3.50% (3.55%)	4.00% (4.06%)	3.80% (3.85%)	3.80% (3.85%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	4.00% (4.00%)	4.00% (4.00%)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:

ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԱՆ Է՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

- i** - մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքն է (ՄՄԷՏ),
- K_n** - դրամական միջոցների n հոսքերը բանկի տեսանկյունից,
- N** - դրամական միջոցների հոսքերի քանակը՝ կապված տվյալ ֆինանսական գործիքի հետ,
- A** - ներգրավված կամ տրամադրված միջոցի սկզբնական գումարը,
- D_n** - n-րդ դրամական հոսքի ստացման ժամանակահատվածը՝ արտահայտված առաջին հոսքից հետո անցած օրերի թվով (առաջին հոսքը միջոցի ներգրավման կամ տրամադրման ամսաթիվն է):

Եթե տեղեկատվական ամփոփագրում ներկայացված աղյուսակի համապատասխան դաշտում նշված է «X», ապա այն նշանակում է, որ տվյալ ավանդատեսակի համար այդ պայմանը կիրառելի չէ

¹«ԱՄԵՐԻԱ ԱՎԱՆՉ» է համարվում ժամկետային ավանդի այն տեսակը, որի դեպքում ավանդի պայմանագրի գործողության ժամկետում Ավանդատուն (ինչպես նաև երրորդ անձը) չունի ավանդը ավելացնելու կամ նվազեցնելու հնարավորություն:

²Հաճախորդի կողմից ավանդի պայմանագրի ժամկետից շուտ դադարեցվելու դեպքում կատարվում է վերահաշվարկ՝ ավանդի պայմանագրի դադարեցման պահի դրությամբ ավանդի փաստացի գործողության ժամանակահատվածին համապատասխանող տվյալ ավանդատեսակի համար սահմանված տոկոսադրույքով: Ավանդը ենթակա չէ մասնակի դադարեցման:

Եթե ավանդի ներդրման պահից անցել է մինչև 30 օր, ապա ավանդը ժամկետից շուտ դադարեցնելու դեպքում կատարվում է վերահաշվարկ՝ տարեկան 0.1% տոկոսադրույքով:

Տվյալ հնարավորությունը ընտրելիս տոկոսների վճարման «ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:

³Հաճախորդն իրավունք ունի ավելացնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 ամիսների: Ավանդի գումարը կարող է համալրվել ավանդային պայմանագրի գումարի առավելագույնը 30%-ի չափով: Ավտոմատ երկարաձգված ավելացման հնարավորությամբ ավանդների դեպքում կհամարվի, որ կնքվել է նոր ավանդ, և երկարաձգումից հետո համալրման սահմանափակումները կաշխատեն նույն սկզբունքով, ինչ նույն պայմաններով կնքված ավանդի դեպքում:

Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

Տվյալ հնարավորությունը ընտրելիս տոկոսների վճարման «ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:

⁴Հաճախորդն իրավունք ունի նվազեցնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության առաջին 3 ամիսների: Ավանդի գումարը կարող է նվազել ավանդային պայմանագրի գումարի առավելագույնը 30%-ի չափով: Վերադարձված մասի նկատմամբ կուտակված տոկոսների վերահաշվարկ չի կատարվում:

Ավանդի գումարի նվազեցման դեպքում Բանկը Ավանդատուին հանձնում է ավանդային հաշվի քաղվածք: Քաղվածքի ստացման փաստն Ավանդատուն հաստատում է ստորագրությամբ, որով հավաստում է Ավանդի գումարի փաստացի նվազեցումը:

Տվյալ հնարավորությունն ընտրելիս տոկոսների վճարման «ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:

2 մրդ ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտաստույթից ավել ավանդների դեպքում՝ պայմանները սահմանվում են համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:

Հավելյալ հնարավորություններ.

Բանկի որոշմամբ Ավանդատուին կարող է տրամադրվել վարկ, վերականգնվող կամ չվերականգնվող քարտով վարկային գիծ (դեբետային կամ կրեդիտային քարտով)՝ հետևյալ պայմաններով.

Արժույթ	Տոկոսադրույք	Վարկ(վարկային գիծ)/Ավանդ հարաբերակցություն (LTV) ¹
Ավանդի արժույթով	Ավանդի տոկոսադրույք + 4%	Մինչև 90%
Ավանդի արժույթից տարբերվող արժույթով	Մանրածախ վարկավորման պայմաններով սահմանված տոկոսադրույք	Մինչև 70%

Վարկային քարտով պարտավորությունները ժամանակին չմարելու դեպքում Բանկն իրավունք ունի անակցեպտ գանձել պարտավորության գումարը Ավանդի գումարից:

Ավանդի ներդրման և սպասարկման կանոններ

1. Ավանդի ընդունման հիմքը Բանկի և Ավանդատուի միջև կնքված Բանկային ավանդի հայտ-պայմանագիրն է: Բանկային ավանդի հայտ-պայմանագրի ձևը գրավոր է:
2. Ավանդը կարող է ներդրվել Բանկ երրորդ անձի անունով: Ընդ որում, երրորդ անձը կարող է լինել նաև անչափահաս անձ: Երրորդ անձը ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը Բանկի սահմանած ձևանմուշով Բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, եթե երրորդ անձը անչափահաս է, ապա նշված պահանջը նա կարող է Բանկ ներկայացնել 18 տարին լրանալուց հետո, իսկ մինչ այդ՝ նման իրավունքը վերապահված է անչափահաս անձի օրինական ներկայացուցչին(ներին): Մինչև երրորդ անձի կողմից ավանդատուի իրավունքների վրա հիմնված պահանջը Բանկ ներկայացնելը, ավանդը տնօրինում է ավանդը ներդնող անձը, ով ստորագրել է Հայտ-պայմանագիրը՝ համաձայն Հատ-պայմանագրով տրված հանձնարարականների և պայմանների:
3. Բանկում ժամկետային ավանդ ներդնող Ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում՝ նաև բանկային հաշիվ Ավանդի արժույթով: Ավանդի արժույթով բանկային հաշիվ բացելու դեպքում հաշվի բացման միջնորդավճար չի գանձվում:
4. Ընթացիկ բանկային հաշվի սպասարկման ամբողջական սակագներին և պայմաններին կարող էք ծանոթանալ **այստեղ**:
5. Բանկում հաշիվ բացելու և ավանդի համար անհրաժեշտ փաստաթղթերին և տեղեկություններին կարող էք ծանոթանալ **այստեղ**:
6. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել

¹ Վարկային գիծ/ավանդ հարաբերակցության մեջ ավանդի գումարը ներառվում է ժամկետի սկզբում վճարված տոկոսագումարը նվազեցնելուց հետո:

լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

7. Բանկի կողմից կնքված պայմանագրերը, համաձայնագրերը, համագործակցությունները, կամ անդամակցությունները ուղղակի ազդեցություն կարող են ունենալ հաճախորդների հաշիվների բացման և սպասարման վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»):
8. Հաշիվների քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: **ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄՆ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՄԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵՇԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**

Հաշվից քաղվածքները տրամադրվում են հետևյալ սակագներով.

<i>Քաղվածքի տրամադրման միջնորդավճար</i>	
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	անվճար
1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար
1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի ուղարկում հաճախորդի էլեկտրոնային հասցեին առանց դրոշմակնիքի	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար

<i>Քաղվածքի առաքման միջնորդավճար</i>	
Էլեկտրոնային փոստով	անվճար
Փոստով՝ ՀՀ տարածքում	Ամսական 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
Փոստով՝ ՀՀ տարածքից դուրս ²	Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի

9. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով 1/365 օր հարաբերակցությունը:

² Առաքումը կատարվում է ռեգուլյար փոստի միջոցով:

10. Տոկոսների հաշվարկը իրականացվում է Ավանդի` Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
11. Ավանդատուի բանկային հաշվին մուտքագրված տոկոսագումարը ենթակա է հարկման եկամտային հարկով` ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 10% տոկոսադրույքով:
12. Ավանդային պայմանագրով կարող է նախատեսվել տոկոսների վճարման հետևյալ եղանակներից մեկը`
 - 12.1 Տոկոսների ամսական վճարում`** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր ամիս հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:
 - 12.2 Ամսական տոկոսների կապիտալացում`** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր հաջորդ ամսվա ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտային հարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:
 - 12.3 Տոկոսների եռամսյակային վճարում`** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ եռամսյակի վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:
 - 12.4 Եռամսյակային տոկոսների կապիտալացում`** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտային հարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:
 - 12.5 Տոկոսների տարեկան վճարում`** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, տարին մեկ անգամ տարվա վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:
 - 12.6 Տոկոսների տարեկան կապիտալացում`** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, տարին մեկ անգամ ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտային հարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:
 - 12.7 Տոկոսների վճարում ժամկետի սկզբում`** տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար տոկոսագումարները հաշվեգրվում են Ավանդատուի հաշվին ավանդի ներդրման օրը: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ:
13. Բանկային ավանդի հայտ-պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:
14. Բանկային ավանդի հայտ-պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է բանկային ավանդի հայտ-պայմանագրով և ֆիզիկական անձանց համար ավանդի պայմաններով սահմանված դեպքերում և կարգով:
15. Բանկը պարտավոր է Ավանդը կամ դրա մի մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով: Սույն պայմաններով սահմանված կարգով, Ավանդատուի առաջին իսկ պահանջով Ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջվելու դեպքում Բանկը Ավանդատուի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կատարում է վերահաշվարկ և վերադարձնում է վերահաշվարկման արդյունքում մնացած Ավանդի գումարը: Այդ դեպքում հաճախորդին վճարվում է տոկոսագումար` ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքի փոխարեն

տարեկան 0.1% տոկոսադրույքով: Այն դեպքում, երբ ավանդատուին արդեն վճարվել են տոկոսներ, որոնք վերահաշվարկման արդյունքում ենթակա են հետ գանձման, Ավանդի մայր գումարից նվազեցվում է վճարված տոկոսագումարների և տարեկան 0.1% տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարների տարբերությունը: Սույն կետը կիրառվում է, եթե ավանդի պայմաններով և/կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

16. Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ հայտ-պայմանագրում կատարված նշումի՝ կա՛մ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը հայտ-պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կա՛մ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները:
17. Ավանդատուի մահվան դեպքում Ավանդի տոկոսների հավելագրումը շարունակվում է մինչև բանկային ավանդի հայտ-պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, որից հետո Բանկը Ավանդը և հավելագրված տոկոսները փոխանցում է Ավանդատուի բանկային հաշվին: Տվյալ դեպքում նշված գումարները Ավանդատուի ժառանգներին են տրվում նշված գումարների նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքը հաստատող օրենքով սահմանված կարգով ժառանգության պատշաճ ձևակերպման և այդ փաստը հավաստող փաստաթղթերը բանկ ներկայացնելու դեպքում:
18. Ավանդների հատուցման երաշխավորող է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը(գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ չափերը.
 - միայն ՀՀ դրամով ավանդի առկայության դեպքում երաշխավորված ավանդի չափը կազմում է 16 մլն ՀՀ դրամ,
 - միայն արտարժույթային ավանդի առկայության դեպքում ավանդը երաշխավորվում է 7 մլն ՀՀ դրամի չափով,
 - եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 7 մլն ՀՀ դրամից ավելի է, երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
 - եթե դրամային ավանդը պակաս է 7 մլն ՀՀ դրամից, երաշխավորվում են դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 մլն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:Ընդ որում Բանկում առկա բոլոր
 - դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ,
 - արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ
19. Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
20. Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է բռնագանձել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված գրության/հայտի հիման վրա, ինչպես նաև հաճախորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված կարգով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
21. Բանկի հեռավար եղանակով սպասարկման պայմանները ներկայացված են Ֆիզիկական անձանց [բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների](#) 3-րդ ենթաբաժնում:
22. Բանկի սպասարկման ցանցին, մասնաճյուղերի հասցեներին և աշխատանքային ժամերին կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Սպասարկման ցանց](#):

23. Ավանդային հայտ-պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
 Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: **Հայտարարություն՝ ֆիզիկական անձը հնարավորություն ունի ներկայացնելու ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կնքվող գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին: «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ կնքել է համաձայնագիր, որը տարածվում է միայն այն պահանջների վրա, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:**
24. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄՍԱՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»:
 Կայքի հղումն է www.fininfo.am:

Օրինակ 1.	
Ավանդի տեսակ՝	Ամերիա ավանդ
Արժույթ՝	ՀՀ դրամ
Ժամկետ և տոկոսների վճարման եղանակ՝	366 օր ժամկետով՝ տոկոսների վճարման ժամկետի սկզբում եղանակ
Ավանդի գումար՝	100,000 ՀՀ դրամ
Տարեկան պարզ տոկոսադրույք՝	7.5%
Ավանդի ներդրման ամսաթիվ՝	01/06/2020
Ավանդի մարման ամսաթիվ՝	02/06/2021
Տոկոսների վճարման ամսաթիվ՝	01/06/2020 <i>(ավանդը գործելու է 366 օր, չի հաշվարկվում ավանդի վճարման օրը)</i>
Վճարվելիք տոկոսագումար	$100,000 * 7.5/100/365 * 366 = 7,520.55$ ՀՀ դրամ
Վճարվելիք զուտ տոկոսագումար <i>(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)</i>	$7,520.55 - 7,520.55 * 10/100 = 6,768.50$ ՀՀ դրամ

Օրինակ 2.	
Ավանդի տեսակ՝	Ամերիա ավանդ նվազեցման հնարավորությամբ
Արժույթ՝	ՀՀ դրամ
Ժամկետ և տոկոսների վճարման եղանակ՝	181 օր ժամկետով՝ տոկոսների վճարման եռամսյակային կապիտալացում եղանակ
Ավանդի գումար՝	100,000 ՀՀ դրամ
Տարեկան պարզ տոկոսադրույք՝	6.9%

Ավանդի ներդրման ամսաթիվ՝	01/06/2020
Ավանդի մարման ամսաթիվ՝	29/11/2020
Տոկոսների առաջին կապիտալացման ամսաթիվ՝	29/08/2020 (ավանդը գործելու է 90 օր) $100,000 * 6.9/100/365 * 90 = 1,701.37$ ՀՀ դրամ
Վճարվելիք տոկոսագումար	
Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)	$1,701.37 - 1,701.37 * 10/100 = 1,531.23$ ՀՀ դրամ
Ավանդի մայր գումար	$100,000 + 1,531.23 = 101,531.23$ ՀՀ դրամ 30/11/20թ.-ին ավանդի մայր գումարը նվազել է 21,531.23 ՀՀ դրամով
Տոկոսների երկրորդ կապիտալացման ամսաթիվ՝	29/11/20 (ավանդը գործելու է 91 օր (չի հաշվարկվում ավանդի վճարման օրը), որից 1 օրը ավանդի գումարը կազմել է 101,531.23 ՀՀ դրամ, իսկ մնացած 90 օրերին՝ 80,000.00 ՀՀ դրամ) $(101,531.23 * 6.9/100/365 * 1) + (80,000 * 6.9/100/365 * 90) = 19.19 + 1,361.10 = 1,380.29$ ՀՀ դրամ
Վճարվելիք տոկոսագումար	
Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)	$1,380.29 - 1,380.29 * 10/100 = 1,242.26$ ՀՀ դրամ

Օրինակ 3.	
Ավանդի տեսակ՝	Ամերիա ավանդ ընդհատման և ավելացման հնարավորություններով
Արժույթ՝	ԱՄՆ դոլար
Ժամկետ և տոկոսների վճարման եղանակ՝	271 օր ժամկետով՝ տոկոսների վճարման եռամսյակային եղանակ
Ավանդի գումար՝	10,000 ԱՄՆ դոլար
Տարեկան պարզ տոկոսադրույք՝	2.2%
Ավանդի ներդրման ամսաթիվ՝	01/06/2020
Ավանդի մարման ամսաթիվ՝	27/02/2021
Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝	29/08/2020 (ավանդը գործելու է 90 օր)
Վճարվելիք տոկոսագումար	$10,000 * 2.2/100/365 * 90 = 54.25$ ԱՄՆ դոլար
Վճարվելիք գուտ տոկոսագումար	$54.25 - 54.25 * 10/100 = 48.82$ ԱՄՆ դոլար

<i>(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)</i>	
Տոկոսների վճարման երկրորդ ամսաթիվ՝	27/11/2020 <i>(ավանդը գործելու է 90 օր)</i>
Վճարվելիք տոկոսագումար	$10,000 * 2.2/100/365 * 90 = 54.25$ ԱՄՆ դոլար
Վճարվելիք զուտ տոկոսագումար <i>(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)</i>	$54.25 - 54.25 * 10/100 = 48.83$ ԱՄՆ դոլար
Տոկոսների վճարման երրորդ ամսաթիվ՝	27/02/2021 <i>(ավանդը գործելու է 91 օր, չի հաշվարկվում ավանդի վճարման օրը)</i>
Վճարվելիք տոկոսագումար	$10,000 * 2.2/100/365 * 91 = 54.85$ ԱՄՆ դոլար
Վճարվելիք զուտ տոկոսագումար <i>(նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)</i>	$54.85 - 54.85 * 10/100 = 49.36$ ԱՄՆ դոլար

Օրինակ 4.	
Ավանդի տեսակ՝	Ամերիա ավանդ ընդհատման և ավելացման հնարավորություններով
Արժույթ՝	ԱՄՆ դոլար
Ժամկետ և տոկոսների վճարման եղանակ՝	271 օր ժամկետով՝ տոկոսների վճարման եռամսյակային եղանակ
Ավանդի գումար՝	10,000 ԱՄՆ դոլար
Տարեկան պարզ տոկոսադրույք՝	2.2%
Ավանդի ներդրման ամսաթիվ՝	01/06/2020
Ավանդի մարման ամսաթիվ՝	27/02/2021՝ հաճախորդը ցանկանում է դադարեցնել ավանդը 91 օր հետո
Դադարեցման ամսաթիվ՝	31/08/2020
Դադարեցման պահին վերահաշվարկի պարզ տոկոսադրույք՝	0.7% (համաձայն 91 օր ժամկետով Ավելացման և Ընդհատման հնարավորություններով Ամերիա ավանդի պայմանների)
Տոկոսների վճարման ամսաթիվ՝	31/08/2020 <i>(ավանդը գործելու է 91 օր, չի հաշվարկվում ավանդի վճարման օրը)</i> $10,000 * 0.7/100/365 * 91 = 17.45$ ԱՄՆ դոլար

Վճարվելիք տոկոսագումար	
Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտային հարկի չափով)	$17.45 - 17.45 * 10 / 100 = 15.70$ ԱՄՆ դոլար